ՎԵՐԱՊԱՏՐԱՍՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բանավոր խոսքի զարգացման նշանակությունը հիմնական դպրոցում

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Մկրտչյան

Ղեկավար՝ Աշոտ Գալստյան

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն…… 3

Մաս 1.Արդյունավետ հաղորդակցության խթանում; բանավոր խոսքի զարգացում հիմնական դպրոցում

1.1. Բանավոր խոսքի զարգացման նշանակությունը հիմնական դպրոցում…. 4

1.2. Բանավոր խոսքի զարգացման մեթոդներն ու սկզբունքները…… 7

Մաս 2. Բառի կառուցվածքների ուսումնասիրությունը և խոսքի հմտությունները

2.1. Ձևաբանական իրողությունների ուսումնասիրության դերը բանավոր խոսքի զարգացման մեջ…… 11

Եզրակացություն…… 16

Օգտագործված գրականության ցանկ…… 17

Ներածություն

Աշակերտի խոսքի զարգացումը մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն: Խոսքի զարգացման շնորհիվ է տեղի ունենում դպրոցականի սոցիալականացումը, հոգեկան զարգացումը, մտածողության զարգացումը:

Խոսքի զարգացման խնդիրներից առավել կարևորվում են երեխաների կապակցված խոսքի զարգացումը,քանի որ կապակցված խոսքը մտավոր գործունեության բարձրագույն ձևն է,և դրա զարգացման աստիճանով որոշվում է երեխայի խոսքային և մտավոր զարգացման մակարդակը: Արդի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց երեխաների առօրյայի անբաժան մասն են կազմում համակարգիչները, համակարգչային խաղերը,որոնք չեն ուղեկցվում խոսքային հաղորդակցմամբ:

Դպրոցական տարիքի երեխաները մեծ դժվարություններ են ունենում շփման, հաղորդակցման գործընթացում, նրանք հաճախ խոսում են առանց զգացմունքայնության,նրանց մոտ գրեթե բացակայում է գիտական խոսքի մշակույթի նորմերին ու օրինաչափություններին համապատասխան խոսքը: Մեր օրերում դժվար է հանդիպել երեխայի,որը լիարժեք զարգացած կապակցված խոսք ունենա,կարողանա անկաշկանդ և գրագետ հաղորդակցվել , բանավոր խոսքը լինի ճկուն, սահուն և անսխալ:

Վերը նշված հարցերի լուծման անհրաժեշտությունից էլ բխում է խնդրի արդիականությունը:

Հետազոտության **նպատակն է** բացահայտել աշակերտի բանավոր խոսքի զարգացման մեթոդական հիմքերը:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

1. Ուսումնասիրել աշակերտի բանավոր խոսքի զարգացման մակարդակը, բանավոր խոսքում առաջ եկած խնդիրները:
2. Ներկայացնել աշակերտի բանավոր խոսքի զարգացման սկզբունքներն ու մեթոդները:

ՄԱՍ 1.ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ; ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1. Բանավոր խոսքի զարգացման նշանակությունը հիմնական դպրոցում

Բանավոր խոսքի ուսուցումը կարելի է համարել լեզվի ուսուցման առաջնահերթ և ամենակարևոր խնդիրներից,ինչպես նաև այն ընդհանուր ուսուցման հիմնաքարն ու չափանիշներից մեկն է: Աշակերտի բանավոր խոսքի զարգացումը մայրենի լեզվի դասավանդման ամենակենտրոնական հարցերից է: «Մտքի հարստության համար անհրաժեշտ է խոսքի հարստություն: Խոսքը կառուցվում է բառապաշարով, ժողովրդական աֆորիզմներով ու դարձվածքներով, քերականական ձևերով,ոճական հնարքներով» [1]:

Պրոֆեսոր Ա. Տեր-Գրիգորյանը նշում էր,որ աշակերտի խոսքը ձևավորվում է երեք օջախներում՝ տանը, դպրոցում և հասարակական միջավայրում: Նայած թե երեխան խոսքային ինչպիսի միջավայրում է մեծանում, ինչ է լսում նա իր մեծերից տանը, փողոցում, կինոյում, թատրոնում, ըստ այդմ էլ ձևավորվում է նրա խոսքը[2]:

Գաղտնիք չէ, որ շրջապատից հաճախ երեխայի խոսք են թափանցում գրական լեզվում չընդունված բառեր ու արտահայտություններ, և դպրոցում պետք է ուղիներ փնտրել այդ խնդիրները մանկավարժորեն լուծելու համար:Հասարակական միջավայրում մաքուր գրական լեզվի համար պայքարն ունի համընդհանուր նշանակություն:Իսկ հասարակական միջավայրի մարդիկ երեկվա երեխաներն են,ուրեմն պիտի հետևողական ու կազմակերպված աշխատանք տանել երեխայի խոսքի զարգացման ուղղությամբ: Չպետք է մոռանալ ,որ երեխայի լեզվական գիտելիքներով է պայմանավորված նաև մյուս առարկաների հաջող ուսումնասիրումը:

Մայրենի լեզվի դասընթացի հիմնական նպատակներից մեկն էլ գրական կենդանի լեզվի ուսուցումն է,աշակերտի մեջ խոսքի կուլտուրայի մշակումն ու զարգացումը, որովհետև առանց մայրենի լեզվի տիրապետման հնարավոր չէ պատկերացնել ու իրականացնել երեխայի լիարժեք կրթությունն ու դաստիարակությունը:

1. Տ. Շահբազյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա,Երևան 1958, էջ 348:
2. Ա.Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 412:

Լեզվի մեջ և լեզվի միջոցով է,որ երեխան շրջապատի, բնության ու հասարակության մասին ստանում է այն տեղեկություններն ու գիտելիքները,որոնք անհրաժեշտ են մարդուն այդ բնության ու հասարակության մեջ ապրելու, աշխատելու և պայքարելու համար:

Խոսքի զարգացման համար երեխայի դպրոցական տարիքը անփոխարինելի մի ժամանակաշրջան է: «Այս տարիքում երեխան, երբեմն իր համար էլ աննկատելի կերպով, հազարավոր նոր բառեր, արտահայտություններ է սովորում, ընկալում է լեզվի այն հիմնական ատաղձն ու յուրահատկությունները,որը հաճախ շատ մեծ ջանքերի գնով է հաջողվում չափահաս մարդկանց»[2]:

Դասավանդման ընթացքում այս հանգամանքը պետք է հաշվի առնի ուսուցիչը և տարրական և հիմնական դասարանները դարձնի երեխայի խոսքի զարգացման հիմնական օղակ, մայրենի լեզվի բառապաշարի հիմնական ֆոնդի ուսուցման ժամանակաշրջան: Առհասարակ ուսուցման ողջ համակարգի նպատակը երեխայի ընդհանուր զարգացումն է, որն առաջին հերթին իրականացվում է խոսքի միջոցով և արտահայտվում է խոսքի մեջ: Հենց այդ առումով էլ աշակերտի խոսքի զարգացումը մայրենի լեզվի տարրական և հիմնական դասընթացի կարևորագույն խնդիրներից մեկը պետք է դարձնել:

Գրավոր խոսքի տիրապետման հիմնական միջոցը մնում է բանավոր խոսքը, որովհետև այն հենվում է բանավոր խոսքի վրա: Բանավոր խոսքը պետք է լինի անմիջական, ունենա բարձր արտահայտչականություն, ճիշտ արտահայտի մարդկային հույզերը, ապրումները, տրամադրություններն ու զգացմունքները:

Աշակերտների բանավոր խոսքի զարգացմանն ուշադրություն դարձնելիս պետք է շեշտը դնել հենց այս առանձնահատկությունների զարգացման վրա՝ զարգացնելով երեխայի ստեղծագործական մտածողությունը, ձևաբանական իրողությունների գրական ճիշտ նորմերին տիրապետելը:

2.Ա.Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 404:

Աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր ուղենշային դեր ունի ուսուցչի խոսքը, որը դիտվում է իբրև կենդանի, զարգացող ու ծավալվող, երեխայի հոգու հետ հաղորդակցվող,նրա հետաքրքրություններին ու որոնումներին բավարարություն տվող խոսք, որովհետև բնական ձևով արտասանվող կենդանի ու անմիջական խոսքն ավելի խորն է ազդում մարդու վրա,քան կարդացածը:

Ընդ որում, Ջ. Գյուլամիրյանը,կարևորելով այս հարցը, գրում է,որ մայրենի լեզվի դասերին պետք է խուսափել տեսական կանոնների և սահմանումների, քերականական իրողությունների բերանացի շարադրումից, որոնք աշակերտներից պահանջում են միայն լսել, ընկալել և նույնությամբ վերարտադրել [3]:

Այս առումով ուսուցչի խոսքը պետք է լինի պարզ, հստակ, մատչելի ու գրավիչ, որպեսզի երեխաներին տանի իր հետևից, սիրել տա մեր լեզուն:

3.Ջ.Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009, էջ 295:

1.2. Բանավոր խոսքի զարգացման մեթոդներն ու սկզբունքները

Աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեն զրույցները: Երեխաների դպրոց գնալու առաջին իսկ օրից սկսած ուսուցիչը նրանց հետ զրուցելու բազմաթիվ առիթներ է ունենում:Սկզբնական շրջանում այդ զրույցը կարող է պարզ հարց ու պատասխանի բնույթ կրել, իսկ հետագայում աշակերտների գիտելիքների ընդարձակմանը և բառապաշարի հարստացմանը զուգընթաց, այն կարող է աստիճանաբար վերածվել երկկողմանի զրույցի:

Այսպիսի զրույցների համար թեմաներ կարող են լինել աշակերտների ընկերները, դասերը, դպրոցական խաղերն ու պարապմունքները, ընտանի և վայրի կենդանիները, բնական ու հասարակական երևույթները՝ ելնելով աշակերտի տարիքային առանձնահատկություններից: Այս զրույցների ընթացքում աշակերտները հնարավորություն են ունենում խոսել պարզ, հակիրճ, կապակցված կերպով պատասխանել տրված հարցերին կամ շարադրել իրենց իմացածն այս կամ այն հարցի վերաբերյալ. դա մի կողմից նրանց խոսել, իրենց մտքերը շարադրել է սովորեցնում, մյուս կողմից՝ ուսուցչին հնարավորություն է տալիս հղկել, մշակել ու մաքրել նրանց լեզուն: Հետևաբար այսպիսի զրույցներին որքան կարելի է շատ տեղ պետք է տալ դասավանդման ընթացքում:

Չափազանց կարևոր է երեխաների մեջ սկզբից եթե մշակել սեփական խոսք կառուցելու կարողութուն, լեզվական ճաշակ ու լեզվազգացողություն, իսկ դրա համար պետք է միշտ ազատություն տալ երեխային մտածելու և խոսելու՝հետևելով նրա խոսքի գրագիտական ճշտությանը:

Պետք է պահանջել,որ աշակերտները դասը ներկայացնեն իրենց բառերով, չկառչեն դասագրքի բառերից, վերարտադրեն սեփական բառերով,ներկայացնեն գլխավոր գաղափարը՝ միևնույն ժամանակ թույլ չտալով օգտագործել առօրյա խոսակցական բառեր:

Բանավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է նկարների բովանդակության վերարտադրումը: Նկարները նպաստում են երեխայի տարածական ըմբռնումների, պատկերացումների ու խոսքի զարգացմանը:

Խոսքի զարգացմանը նպաստում է տրված բառերով կապակցված տեքստի կազմումը: Նմանատիպ աշխատանքները կատարել դպրոցում՝ բացառելով ծնողի օգնությունը:

Երեխաների բանավոր խոսքի զարգացմանը նպաստում է նաև հեքիաթներ պատմելը: Երեխաները չափազանց շատ են սիրում հեքիաթներ, մեծ ուրախությամբ ու հաճույքով են պատմում իրենց լսած ու կարդացած հեքիաթները: Այս բանը պետք է օգտագործել աշակերտների բանավոր խոսքը զարգացնելու և կատարելագործելու համար:

Երեխայի խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է գեղարվեստական տարբեր ստեղծագործությունների ընթերցումը: Գրքերի թեման պետք է համապատասխանի աշակերտների տարիքային առանձնահատկություններին և հետաքրքրություններին, լինի ոչ ծավալուն: Ընթերցանության և ուսուցման համար ընտրված թեմաները պետք է լինեն հայրենիքի, հերոսական սխրանքների, աշխատասիրության, բարեկամության, պատվախնդրության, բարության, ճշմարտախոսության, պատասխանատվության վերաբերյալ, որպեսզի ուսուցման ընթացքում հնարավոր լինի երեխայի անձի ձևավորումն իրականացնել բարոյական բարձր չափանիշներին համապատասխան:

Հատկապես ուշադրություն պետք է դարձնել ընթերցված նյութի զգայական կողմին, կարծիքներ և տպավորություններ փոխանակել, կապել այն երեխայի սեփական փորձի հետ՝ այդ ողջ ընթացքում զարգացնելով խոսքը, երևակայությունը և մտածողությունը: Իսկ արտադասարանական ընթերցանության միջոցով պետք է զարգացնել գրքերի բովանդակությունն ինքնուրույն ընկալելու և ներկայացնելու կարողությունը:

Աշակերտների տրամաբանական մտածողության, հաղորդակցական կարողությունների ձևավորման նպատակով ևս պետք է կատարել տարբեր վարժություններ: Օրինակ՝ տեքստի խառնված նախադասությունների շտկում, պլանի կազմում և դրան համապատասխան պատմության հորինում:

Հիմնական դպրոցում անհրաժեշտ է զարգացնել տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու կարողություններ: Նրանք պետք է կարողանան տեքստից առանձնացնել հերոսներին բնութագրող բառերն ու

արտահայտությունները,բնության նկարագրության հատվածները, կարողանան հակադրել հերոսներին և նրանց արարքները,վերհանեն դրանց դրդապատճառները, դրսևորեն գնահատողական վերաբերմունք,արտահայտեն իրենց դիրքորոշումը:Այս ամենը պետք է իրականացվի ուսուցչի ուղղորդմամբ, որպեսզի աշակերտներն ավելի անկաշկանդ ու հիմնավորված կարողանան ներկայացնել իրենց տեսակետներն ու կարծիքները, նրանց խոսքն ունենա տրամաբանված ու կուռ կառուցվածք: Աշակերտներին գիտելիքները պետք է տրվեն ոչ այնքան դրանք իմանալու,որքան դրանց վերաբերյալ դատելու կարողություն ձևավորելու նպատակով,որովհետև միտքը կատարելագործվում է ավելի շատ մտածելու, քան սերտելու ընթացքում

Հիմնական դպրոցում բառապաշարի հարստացման միջոցով պետք է ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, հարստացնել գիտելիքները:Այդ աշխատանքներն իրականացվում են բառակազմական, բառի մասին բացատրման և նրա ճիշտ գործածման վերաբերյալ վարժությունների, հոմանիշների, հականիշների դուրսգրման միջոցով: Այդ նպատակով կատարում ենք ճանաչողական, կիրառական և ստեղծագործական բնույթի վարժություններ:Աշակերտին պետք է վարժեցնել տեքստում ճանաչել նոր բառը,տեքստում գտնել բացատրությունը, այն կիրառել խոսքում՝ կազմելով բառակապակցություններ, նախադասություններ:Այս գործընթացը պետք է կրի շարունակական բնույթ, որպեսզի աշակեերտի մեջ ձևավորվի նյութի մեջ նոր բառի ճանաչման ու ընկալման կարողություն:

Աշակերտների խոսքի զարգացման, կապակցված խոսքի ձևավորման համար կազմակերպվում են տարբեր խոսքային իրավիճակներում խոսք կառուցելու, երկխոսություններ և մենախոսություններ ստեղծելու կարողություններին միտված աշխատանքներ, աշակերտներին հանձնարարվում է վերարտադրել ընթերցած նյութի բովանդակությունը, այն կարդալ դերերով, բեմադրել: Ամփոփիչ դասերը ևս նպաստում են աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը:

Ամփոփիչ դասերին, եթե միայն ուսուցիչը դրանք լավ է նախապատրաստում, երեխաները սովորում են ինքնուրույն խոսք կառուցել,ընդհանրացումներ կատարել, խոսել ու դատել, եզրակացություններ անել,որոնք բանավոր խոսքի մշակման և կատարելագործման համար շատ կարևոր նշանակություն ունեն:

Աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը նպաստում են նաև հանդեսները, աշակերտական ցերեկույթներն ու հավաքները,եթե միայն դրանք լավ են նախապտրաստվում: Սրանից հետևություն, որ դպրոցում որքան հնարավոր է շատ պետք է կազմակերպվեն միջոցառումներ: Աշակերտները միջոցառումներին մասնակցում են բարձր ոգևորվածությամբ, սովորում շատ օգտակար բաներ և բարձրանում է խմբային համագործակությունը:

Աշակերտների խոսքի զարգացումը ոչ միայն մայրենի լեզվի ուսուցչի, այլև մնացած բոլոր ուսուցիչների հոգածության առարկան պետք է լինի: Սխալ խոսելիս աշակերտին պետք է ուղղել ամեն տեղ ու ամենուրեք, որպեսզի նա ինքն իր լեզվի նկատմամբ մշտական հսկողություն սահմանի և խոսի այնպես, ինչպես պահանջվում է:

ՄԱՍ 2.ԲԱՌԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՍՔԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Ձևաբանական իրողությունների ուսումնասիրության դերը բանավոր խոսքի զարգացման մեջ

Պրոֆեսոր Տ. Շահբազյանը նշում է,որ ձևաբանական ուսուցումը մեր լեզվի հարստությունը, ճկունությունը բացահայտելու լավագույն միջոցներից մեկն է: Ձևաբանության ուսուցումը օժանդակում է նաև ճիշտ խոսելու և կարդալու, անսխալ գրելու և օտար լեզուներն ավելի ճիշտ ու արագ սովորելու ունակության զարգացմանը [1]:

Հենց այս տեսակետից էլ դպրոցներում ձևաբանության,որպես քերականության մի հիմնական բաժնի, բարձր մակարդակով ուսուցումը խիստ կարևոր նշանակություն է ստանում:

Կարևորում ենք նաև տեսական, պրակտիկ մեթոդներով դասի վարումը: Ուսուցումը պետք է կապել երեխայի կյանքի հետ, օրինակները վերցնել նրա առօրյայից, դիդակտիկ նյութերով աշխատել: Շատ ավելի արդյունավետ կլինի ձևաբանական գիտելիքների ուսուցումը կազմակերպել խաղային մեթդներով,որովհետև այն ինչ ավելի դժվար է յուրացվում,ամբողջապես չի հասկացվում աշակերտների կողմից,պետք է ուսուցանել աշակերտներին ավելի հետաքրքիր ,գրավիչ տարբերակով `ժամանակակից մեթոդներով և խաղային մեթոդներով: Խաղային մեթոդներն ավելի պարզ, հասկանալի ու հետաքրքիր են դարձնում նյութի ուսուցումը,երեխաների ոգևորությունը մեծ է լինում, դասարանում մրցակցության մթնոլորտը բարձրացնում է ուսուցման որակն ու արդյունավետությունը, քանի որ ամեն մեկը ձգտում է հաղթել, առաջինը լինել: Բացի դրանից ծույլ աշակերտները իրենց վատ են զգում,որ խաղին չեն կարողանում ակտիվ մասնակցել,փորձում են ուղղել բացթողումները:

Ձևաբանական գիտելիքների ուսուցումը սերտորեն կապվում է բանավոր խոսքի ուսուցման ու զարգացման աշխատանքների հետ:

1.Տ. Շահբազյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան 1958, էջ74:

Քերականական ուսուցման ամբողջ նպատակը պետք է լինի սովորեցնել կանոնավոր նախադասություններ կազմել, հարստացնել աշակերտի ակտիվ ու պասիվ բառապաշարը և խմբավորել այն ըստ իմաստի:

Խոսքի մասերի ուսուցումն անմիջապես կապվում է բանավոր խոսքի ուսուցման աշխատանքների հետ:

Ձևաբանական իրողությունների ուսուցումը և գիտելիքների հաղորդումը ուղղակիորեն կապված է բանավոր խոսքի զարգացման հետ, քանի որ եթե աշակերտն ունի ձևաբանական գիտելիքների բարձր մակաանավոր խոսքիրդակ,ապա նրա բանավոր խոսքը ևս զարգացած ու հարուստ կլինի:

Խոսքի մասերի ուսուցման ընթացքում զարգանում է աշակերտների բանավոր խոսքը, հարստանում բառապաշարը,պատկերավոր մտածողությունը, երևակայությունը:Եթե աշակերտները չհասկացան ու չկարողացան նախադասության կամ բնագրի մեջ գտնել խոսքի մասերը,ապա բանավոր խոսքի զարգացում էլ տեղի չի ունենա:

Աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար շատ կարևոր է ձևաբանական գիտելիքների իմացությունն ու ճիշտ կիրառումը: Որքան բարձր է երեխաների ձևաբանական գիտելիքների մակարդակը, ինչպես նաև հստակորեն գիտակցված,այնքան զարգացած է նրանց խոսքը:Հայտնի է ,որ ձևաբանության ուսուցումն օժանդակում է ճիշտ,վարժ խոսելու և կարդալու, անսխալ գրելու ունակությունների զարգացմանը:Այն աշակերտը,որը չունի քերականական գիտելիքների բավարար մակարդակ, չի կարող անսխալ խոսել:

Հաճախ քերականական գիտելիքների ձեռքբերման գործընթացն իրականացվում է պարզապես կանոններ և սահմանումներ անգիր անելու և վերարտադրելու ճանապարհով, քերականական նյութի յուրացումը դառնում է ձևական և անարդյունավետ,այսինքն՝ չի նպաստում բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորմանն ու զարգացմանը: Հաճախ կարելի է հանդիպել աշակերտների, որոնք անսխալ վերարտադրում են բոլոր քերականական սահմանումները, սակայն այդ նույն սահմանման կիրառման վերաբերյալ առաջադրված վարժությունը չեն կարողանում կատարել: Երեխաները հիշում են և կրկնում սահմանումը՝ առանց նրա էությունը հասկանալու:

Արդյունքում՝ երեխաներն իրենց բանավոր և գրավոր խոսքում թույլ են տալիս լեզվական սխալներ,վրիպումներ հենց այս կանոնների վերաբերյալ,որոնք անգիր վերարտադրում են յուրաքանչյուր դասին: Այս համատարած երևույթի պատճառն առաջին հերթին քերականական գիտելիքների յուրացման գործընթացի սխալ կազմակերպումն է, հատկապես ձեռք բերած գիտելիքները կարողությունների և հմտությունների վերածման ճանապարհին, որի հետևանքով լեզվական նյութի յուրացումը դառնում է ձևական, ոչ հիմնավոր: Հիմնավոր ուսուցման համար անհրաժեշտ են առարկային վերաբերող գիտելիքներ և դրանք կիրառելու կարողություններ:

Քերականական նյութի յուրացումը դժվարանում է, շուտ մոռացվում նաև այն պատճառով, որ ամրակայման նպատակով իրականացվող կրկնությունները կայուն կապեր չեն ստեղծում անցածի, յուրացրածի հետ, ինչպես նաև աշակերտները դրանք չեն կիրառում խոսքում:

Ժամանակակից մեթոդիկան առաջարկում է քերականական նյութի յուրացման ակտիվ, փոխգործուն, գործնական մեթոդներ, որոնք նպաստում են նյութի յուրացմանը, կիրառմանն ու հետագայում դրանց հիման վրա նոր գիտելիքների ձեռքբերմանը:

Այսպիսով, լեզվական գիտելիքների յուրացման գործընթացի նկատմամբ այսպիսի մոտեցման պայմաններում քերականության ուսումնասիրումը դառնում է ոչ թե նպատակ, ոչ թե տեսական գիտելիքների սերտման գործընթաց, այլ բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորման և զարգացման միջոց:

Օրինակ, գոյական անվան հոլովման ուսուցումը տանում ենք ինդուկտիվ եղանակով: Շատ ճիշտ է նկատել պրոֆ. Ջ. Գյուլամիրյանը՝ ասելով. «Մինչև հոլովման մասին գաղափար կազմելը աշակերտների ուշադրությունը պիտի հրավիրել նախադասության մեջ բառերի կրած փոփոխության,մասնավորապես, դրանց վերջին տառերի փոփոխման վրա՝ բացատրելով,որ այս փոփոխությունն անհրաժեշտ է, որպեսզի նախադասության կազմի մեջ մտնող բառերի միջև կապեր ստեղծվեն» [3]:

3.Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, ,էջ 240:

Մանրամասնությամբ այս երևույթը դիտարկելու և նախադասությունների մեջ բառերի կրած փոփոխությունն ակնառու դարձնելու համար աշակերտներն ուսուցչի օգնությամբ գրատախտակին գրում են (նախադասությունների մեջ) իր և անձ ցույց տվող երկու գոյական՝ հոլովական բոլոր ձևերով:

ԵՐԿԻՆՔ	ՄԱՅՐԻԿ
1.Երկինքը կամաց-կամաց մթնեց:	1. Մայրիկը ստուգում է օրագիրը:
2.Երկնքի մռայլը ցրվեց:	2. Մայրիկի վերնազգեստը գեղեցիկ է:
3.Ինքնաթիռը մոտենում էր երկնքին:	3. Մայրիկին օգնել է հարկավոր:
4.Լուսինը լուսավորեց երկինքը:	4. Լուսինեն փարվում է իր մայրիկին:
5.Երկնքից թափվեցին ձյան փաթիլները:	5. Մայրիկից սեր ու ջերմություն է ճառագում:
6.Երկնքով հմայվում էի:	6. Ես հպարտանում եմ իմ մայրիկով:
7.Երկնքում ամպեր են հավաքվել:	7. Իմ մայրիկի մեջ շատ սեր կա:

Ձեռք բերածն իմաստավորելու համար ուսուցիչն աշակերտներին առաջարկում է ընդգծել գոյականների վերջավորությունները,որոնց միջոցով նախադասության բառերըկապվում են միմյանց: Այնուհետև հարցերի միջոցով կապեր են ստեղծվում հարցերի և դրանց պատասխան բառերի միջև: Աշակերտներն օրինակների վրա նկատում են ,որինչպես գոյականի թիվը փոխվելիս հարցը փոխվում է,այնպես էլ բառի վերջավորությունները փոխվելիս բառին առաջադրվող հարցերն են փոխվում :

Ուսուցման հաջորդ փուլում աշակերտները ծանոթանում են գոյական անունների վերջավորությունների փոփոխությանն ըստ հոլովների, սովորում են հոլովների անունները և վերջավորությունների միջոցով ձեռք են բերում հարցերի օգնությամբ գոյական անվան հոլովը որոշելու կարողություն:

Ուղղական-երկինք(ը)-ի՞նչ(ը)	մայրիկ(ը) -ո՞վ
Սեռական- երկնքի-ինչի՞	մայրիկի- ու՞մ
Տրական - երկնքի(ն)-ինչի՞(ն)	մայրիկին-ու՞մ և այլն:

Ուսուցման հաջորդ փուլի հիմնական խնդիրը գործնական է՝ ձևավորել բանավոր և գրավոր խոսքում գոյականների հոլովաձևերը ճիշտ կերպով կիրառելու ունակություն:Որպեսզի հարցերի միջոցով հոլովները որոշելիս երեխաները չդժվարանան,անհրաժեշտ է նրանց բացատրել, որ պետք է հարցի միջոցով նրա հետ մտքով կապված բառերից գնալ դեպի գոյականը (որտեղի՞ց թափվեցին անձրևի կաթիլները- երկնքից):

Ուսուցման գործընթացը գիտակցական դարձնելու ճանապարհով միայն կարելի է վստահ լինել, որ ձևավորված են բանավոր ու գրավոր գրագետ խոսք կառուցելու համար անհրաժեշտ նախադրյալները:

Եզրակացություն

Ուսումնասիրելով մեր առաջադիր խնդիրները՝ հանգել ենք հետևյալ եզրահանգումների՝

Հիմնական դպրոցի աշակերտների խոսքն այնքան էլ զարգացած չէ,խոսքում շատ են գրական նորմերին անհամապատասխան բառերն ու արտահայտությունները: Աշակերտները գրական հայերենով հաղորդակցվելիս շատ են կաշկանդվում, հարկավոր է մղել նրանց ազատ արտահայտման, հաղորդակցման:

Երեխաների բանավոր խոսքի զարգացման համար շատ կարևոր է ձևաբանական գիտելիքների իմացությունն ու ճիշտ կիրառումը: Որքան բարձր է երեխաների ձևաբանական գիտելիքների մակարդակը, ինչպես նաև հստակորեն գիտակցված, այնքան զարգացած է նրանց խոսքը:Հայտնի է,որ ձևաբանության ուսուցումն օժանդակում է ճիշտ,վարժ խոսելու և կարդալու,անսխալ գրելու ունակությունների զարգացմանը: Այն աշակերտը,որը չունի քերականական գիտելիքների բավարար մակարդակ, չի կարող անսխալ խոսել: Հիմնական դպրոցում պետք է մեծ ուշադրություն դարձնել վերը նշված իրողությանը:

Ուսուցումը պետք է անպայմանորեն կապել կյանքի հետ, որպեսզի աշակերտներին մատչելի ու հասկանալի լինի բացատրվելիք նյութը: Պետք է օրինակները վերցնել աշակերտի կենցաղից,շրջապատող իրականությունից: Ուսուցումը պետք է նաև զուգակցել դաստիարակության հետ,աշակերտների մեջ մշակել բարոյական ու գեղագիտական նորմեր:

Աշակերտների խոսքի զարգացումը հաջող կազմակերպելու համար անհրաժեշտ է նաև ուսուցման մեթոդների ճիշտ ընտրություն և գործադրում:

Այսպիսով, բանավոր խոսքը ոչ միայն մարդու զարգացած լինելու հիմնական չափանիշներից է, ամենօրյա հաղորդակցման միջոցը, այլև գրավոր խոսքի զարգացման հիմքը, որը պետք է զարգացնել՝ ելնելով սովորողի տարիքային առանձնահատկություններից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Տ. Շահբազյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա,Երևան 1958, էջ 348:
2. Ա.Տեր -Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 412:
3. Ջ.Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009, էջ 295: